

ՏԵՍԵՍ

ԱՄՍՈՐԵԱՅ ՀԱՆԴԵՍ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ

Բ. ՏՈՒ

1888
Ա.ՊՐԻ

ԹԻՒ 7.

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ ԱՐԵՒԵԼ. ՏՆՏԵՍ.
ՄԻՈՒԹԵԱՆ

Մարտ 27 կիրակի օր՝ Արեւել. Տնտես.
Միութեան ընդհ ժողովց Ե՞՞ գումարումն տեղի ունեցաւ ընդ ատենապետութեամբ դեր նախագահ Մեծ.
Միքայէլ էֆ. Կիւլլապեանի, նախագահ Մեծ. Աւետիս էֆ. Եօրտամեան բանաւոր պատճառաւ բացակայ գտնուելով:

Ատեանը բացուեցաւ ժամը 6ին միջոցները ի ներկայութեան 26 անդամոց որոց թիւը յետոյ 50ի յանդեցաւ, որ ըսել է թէ ժողովցն անդամոց երկու երրորդ մասը ներկայ էր:

Յետ ընթերցման նախորդ ժողովոյ ատենագրութեան՝ որ աւանց դիտողութեան ընդունուեցաւ, Մեծ. նախագահը ժողովցն հազորդեց Քննիչ յանձնաժողովոյ պաշտօնական գրութեան պարունակութիւնը որ կը հաստատէր Միութեան 1887 տարւոյ հաշուոց կատարեալ ճշգութիւնը:

Այսուհետեւ Տնօրէն ժողովոյ տեղեկագիրը կարգացուեցաւ որ՝ 1887 տարւոյ շրջանին մէջ կատարուած Միութեան վանազան գործառնութիւնքն թուելէ յետոյ, կը ծանուցանէր թէ բաժիններու թիւը որ 1886 տարւոյ վերջը 454 էր միայն, 1887 տարւոյ վերջը 604ի յանդած էր, եւ թէ Միութեան հողերու մասին ստանալիք կայսերական արտօնագրոյն համար տըր-

ուած խնդրագիրը էվգաֆի բարձր նախարարութեան կողմանէ սկզբամբ ընդունուած եւ յղուած էր Քաղաքապետի վարչութեան որպէս զի գետիններու պաշտօնական յատակագիծը պատրաստել տայ՝ փողոցները բանալով եւ ըստ օրինի պահականոցի, դպրոցի եւ այլ պէտք եղած տեղերը որոշելով։ Տեղեկագիրը կը վերջանար Տնօրէն ժողովոյ հրաժարմամբ՝ իւր պաշտօնագրարութեան շրջանը աւարտած լինելով։ Ընդհ։ Ժողովը իւր չնորհակալութիւնքն յայտնեց Քննիչ յանձնաժողովոյ եւ Տնօրէն ժողովոյ անդամոց՝ գնահատելով նոցա արդիւնաւոր աշխատութիւնքն յօդուտ Միութեան։

Այս պահուն Մեծ. նախագահը՝ ծանուցանելով թէ ըստ խնդրոց կարգին 1887 տարւոյ հաշուեկիուը պարտի քըուէի դնել, հրաւիրեց զժողովականա յայտնել իրենց դիտողութիւններն եթէ ունին։ Միքանի ժողովականաց կողմանէ բացարութիւններ խնդրուեցան այս մասին, յետ որոյ 1887 տարւոյ հաշուեկիուը օրինաւոր գտնուելով ընդունուեցաւ միաձայնութեամբ։

Յետ այսորիկ խնդրոց կարգին մէջ նշանակուած ըլլալով 1888 տարւոյ համար Տնօրէն ժողովոյ կողմանէ պատրաստուած հաշուեցոյցին քուէարկութիւնը, ժողովականաց ոմանքը առաջարկեցին յատուկ յանձնաժողովոյ մը յանձնել հաշուեցոյցին քննութիւնը, առարկելով թէ կարելի չէր ընդհ. Ժո-

դովյ մէջ մանրամասն քննութիւն մի կատարել։ Բայց Տնօրէն ժողովը անմիջական քննութիւն պահանջելով՝ յետ թեր ու գէմ վիճաբանութեանց, քու էից առաւելութեամբ որոշուեցաւ հաշուեցոյցին քննութիւնը կատարել անմիջապէս Ընդհ. Ժողովոյ մէջ, հետեւ աբար հաշուեցոյցին սիւնակաց մէջ նշանակուած այլ եւ այլ գումարներուն վրայ հարցումներ եղան որոց վրայ գոհացուցիչ պատասխաններ տրուեցան. յետոց վիճաբանութիւնք տեղի ունեցան Տնօրէն ժողովոյ մէջ, հետո անդամութիւններու մասին. բայց ժամանակը անցած ըլլալով վիճաբանութիւնք եզրակացութեան մը չի յանդեցան, եւ որոշուեցաւ շարունակել 15 օր վերջը գումարելիք յաջորդժողովոյ մէջ։

Ժամը 10ին ատեանը փակուեցաւ։

ԱՌԱԿԻ ԼԱՖՈՆԹԷՆԻ

ՄԱՀ ԵՒ ՓԱՑՍԱՀԱՐ

Ճախերով ծածկուած մի թշուառ փայտահար, Միջաբեկ հեծելով կապոցին եւ ամաց Ծանրութեանը ներքեւ թոյլքայլով եւ կամաց ժամանել ջանայր իւր մըրոտեալ տապար, Վերջապէս ուժաթափ՝ ընկճուած ցաւէն ալ, Վար գնէ զիւր կապոց ու սկսի մտմոտալ. Ծնելին ի վեր ինչ հաճոյք է վայելած, Միթէ՞ կայ յաշխարհի իրմէ խեղճ արարած.

Հաց չունի շատ անդամ, իսկ հանգիստ ոչ բնաւ. Կին, որդիք, բռնի տուրք, պաշտօնեայք, քաղց, ծարաւ Հարկահան, պարտատէր, Նկարեն իւր աչաց ձիշտ թշուառ զիւր պատկեր. Յուսահատ կանչէ զմահ, մահն ալ գայ փութապէս, Հարցունէ, « Բարեկամ, ի՞նչ կուզես դու յինէ ».

« Սա կապոցն յիմ շալակ բեռցընել ինձ օգնէ, Բայց խնդրեմ շուտ ընես։ »

Ի Ի Կ Բ Գ Ո Բ Ծ Ն Ե Ւ Ո Ր Դ Ի Ք Ի Ե Ր
Աշխատեցէք, քրտնեցէք.
Ոչ պակսի հացն ալ երբէք,
Երկրագործ մի մեռնելու մօտ Անելով
կանչեց զորդիսն իրեն քով.
Զկար ներկայ
Ոչ ոք վկայ.
Հսաւ, « Այս է իմ կտակ,
Արտ ագարակ
Զոր մեր պապեր մեղի ժառանգ են
թողած
Զըլլայ ծախէք՝ զի հոն մեծ գանձ մէջ
թաղուած,
Ո՞ւր տեղ, ես ալ չգիտեմ. բայց կըր-
նաք դուք
Գտնել զանի եթէ ընէք ջանք եւ փոյթ.
Հունձքէն յետոյ՝ արտն սկսէք անձանձ-
րոյթ
Բրել պեղել, մէկ տեղ պարապ մի թո-
դուք
Զոր ոչ յուզած լինի բահ։
Երբ հայրերնին մեռաւ՝ որդիքը խօսք
մէկ
Փորեցին արտն ամեն կողմ այնպէս
աղէկ
Որ այն տարին բերաւ առատ հունձ
եւ շահ.
իսկ գանձ չկար հոն թագուն.
Բայց հայրն էր շատ իմաստուն
Որ չմեռած իւր որդւոց ցայց տալ ուզեց
թէ աշխատանքն է գանձ մեծ։
Թարգմանեաց
Ս. Ա Զ Է Մ Ե Ա Ն

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Ա. Ո. Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ա Ն Կ Ա Ն Ց

Եթէ բժշկութիւնը այն արհեստն է որ կը բուժէ հիւանդութիւնները, առողջապահութիւնն ալ այն արհեստն է որ կ'զգուշացնէ զմեղ հիւանդութիւններէ, եւ այս պատճառաւ առողջապահութիւնը բժշկութենէ նախամեծար կրնայ նկատուիլ։
Առողջապահութենէ մասնաւոր թէ

հանրային, կախումն ունի յաճախ ամբողջ երկրի մը կենդանութիւնը:

Նախնի Յունաց ժամանակ, որոց կազմուածին գեղեցկութիւնը եւ մարմնոց կայտառութիւնը հռչակաւոր էին, առողջապահութիւնը մեծ գեր ունէր եւ կրօնի հետ կապուած էր:

Մարդու կեանքը տարիքի զանազան բաժանուամերու կը վերածուի որոց իւրաքանչիւրն առանձին առողջապահիկ կանոններ ունի: Առ այժմ նիւթ ընտրած ենք մեզ առաջին հասակն, որ է կաթնտուութեան միջոց:

Մանկութեան սոյն միջոցը նաեւ այլ եւ այլ բաժանուամեր ունի, եւ ծննդենէն սկսելով կը տեւէ մինչեւ որ քսաններորդ ակռայն բուսնի:

Ընդհանրապէս մանուկը ծնելէն հինգ օր վերջը՝ պրտին կապը թառամելով կանջատի. այս առաջին հինգ աւուրց մէջ մանաւանդ ժրաջան խնամոց կարօտ է մանուկը:

Կան խնամներ զորս միայն բժիշկը կամ մանկաբարձր կարող է տալինչպէս երբ մանուկը՝ դժուար ծննդաբերութենէ մը յետոյ, մարած ըլլայ: Մարած ծնեալք յաճախ կաթուածի կերպարանք ունին եւ մանուկը կապոյտ է. այս պարագային հարկ է կորել պորտը առանց զայն կապելու եւ մի քանի փոքրիկ դգալ արիւն հռուցընել. Երբ այսպէս մանուկը մի կամ երկու դգալ արիւն կորսնցնէ կախի անմիջապէս չնչել:

Մարած նորածինը երբեմն ալ խեղդահեղձի կերպարանք կունենայ, անգոյն եւ դալուկ կըլլայ. այս պարագայի մէջ լւագոյն է պորտը չկարել, բայց որովհետեւ մանուկը խնամելու համար հարկ կըլլայ մօրմէն զատել, ուստի անհրաժեշտ է պորտը կարել բայց երկու հանգոյցներու մէջ տեղէն որպէս զի բնաւ արիւնահոսութիւն տեղի չունենայ. ապա պէտք է մանուկին մարմինը շիել, տաք ջրով լուանալ քաշախ կամ մանանխոյ ալիւր խառնելով

եւ ամենէն աւելի արուեստական եղանակաւ օդ չնչելով բերանին մէջ. այս միջոցներով տղան կը սթափի:

Երբեմն նաեւ ձմրան ժամանակ՝ վառարանի ջերմութիւնը, եւ տաք եղանակի մէջ զովարար օդոյն ազդեցութիւնը եւ մանկան բազկաց յաջորդաբար արուած ի վեր եւ ի վար շարժումներն, կը բաւեն վերակենդանացնել զնորածինը: Այս պարագայի մէջ կրնայ պորտը կտրուիլ չնչառութիւնը սկսելէ յետոյ:

Լաւ է նաեւ փափուկ փետուրի մը ծայրովն նորածին մանկան բերանին խորը հաւաքուած հիւթերը մաքրել:

Կը տեսնանք որ ամենաբնական ծննդաբերութեան մէջ անգամ մանկաբարձի մը ներկայութիւնը անհրաժեշտ է թէ մանկան եւ թէ իր մօրը համար:

Նորածին մանկան մարմինը տեսակ մը իւղով ծեփած է զոր պէտք է մաքրել հաւկիթի դեղնուցով կամ ձէթով եւ ապա լուանալ գաղջ ջրով: Յետոյ փափուկ եւ տաք լաթով մը սրբելով պէտք է հագուեցընելէ յառաջ բժշկին կամ մանկաբարձին յանձնել զայն որպէս զի ստուգէ թէ կազմուածի թերութիւն մը չկայ, եւ եթէ լեզուին թելը երկարած է, դարմանէ զայն ինչպէս նաեւ խնամէ պորտին կապը:

Երբեմն պառաւ կանայք մանկան գլուխը կը ձմկն ու կը թրեն, կանոնաւոր ձեւ մը տալու դիտաւորութեամբ. պէտք է զգուշանալ սոյն վոանգաւոր սովորութենէ. եթէ մանկան գլուխը երկարած է ծննդաբերութեան գործողութենէ, թրելու սովորութիւնը կրնայ նորա մտային զարգացման վաս հասցընել. սակայն բնութիւնը անզգալի կերպով եւ կամաց կամաց կրնայ այս թերութիւնը շտկել:

Յետոյ պէտք է հագուեցընել. փութանք ըսելու թէ պէտք չէ բնաւ գործածել սեղմեալ խանձարուրք, որ աճման արգելք ըլլալով կրնայ ոսկերաց կորութիւններ պատճառել:

Պէտք է կակուղ կտաւէ գտակով մը
գլուխը ծածկել եւ եթէ ցուրտ է երկ-
րորդ մը դնել բարակ ֆանչլայէ . հագ-
ցընել շապիկ եւ բաճկոնակ բամկա-
կէ . ձմեռ ժամանակ կրնայ այս եր-
կուքին միջեւ երրորդ մը յաւելուլ
ֆանչլայէ . այս հագուստներուն թե-
զանիքը պէտք է լայն ըլլան ըստ բա-
ւականի որպէս զի մօրը կամ ստնտուին
ձեռքը նորա մէջ կարենայ մտնել եւ
դիւրութեամբ բռնել մանկան ձեռքերը .
եթէ . բռնաբարելով մանկան թեւերը
հագուեցընել ուզուի , կրնայ նորա
փափուկ ուկորները կոտրիլ : Ի վերջոյ
մանուկը պատելու է կտաւէ ծածկոցով
մի եւ եթէ եղանակը ցուրտ է՝ երկ-
րորդ եւ երրորդ մը յաւելուլ բրդէ :
Պէտք չէ բնաւ մանուկը սեղմուած ըլ-
լայ եւ դիսելու է որ կրծին շարժում-
ներն ազատ ըլլան , որպէս զի շնչառու-
թիւնը չնեղուի : Աւելորդ է բաել թէ
բնաւ գնդասեղ չգործածելով մանկան
հագուստները պէտք է ժապաւէններով
միայն կապէլ :

Պէտք է նաեւ տաք սենեակի մէջ
հագուեցընել մանուկը եւ սակայն պա-
տուհանին մօտ որպէս զի կարելի ըլլայ
զով ոգ տալ անմիջապէս եթէ սախոռ-
ղական հարկ մ'ըլլայ :

Մ. Ա.

ԲՈՐԲՈՒԺԵԱԼ ԱՐՏԵՒՐՆՈՒԽԲԸ ԴԱՐՄԱՆԵԼ,

Կարմրցած արտեւանունքը բժշկելու
համար հետեւեալ գեղը գործածելու է :

Օխամուրի թարմ ճիւղ մը առ ,
վրայի կեղեւը հանէ , եւ կեղեւին ան-
միջապէս տակը գտնուած ճերմակ մասը
մանր մանր ջարդէ մինչեւ որ մէջ տեղը
գտնուած փայտը յերեւան ելլայ . ափ
մը այդ ջարդած փայտին վրայ մէկ
լիդրա պաղ ջուր լից եւ ուժով լարկ
մինչեւ որ ջուրը ճերմինայ եւ խժային
թանձրութիւն մը ստանայ . յայնժամ
լաթէ մը անցուր եւ դիր հիւանդ աշ-
քերուն վրայ :

Դէմքի ՀՈՒՐՓ ԵՒ ԿԱՅՃՈՌԻԿՆԵՐԸ (սի-
վիլճիկները) հետեւեալ գեղով կրնան

բժշկուիլ ամենայն յաջողութեամբ :

50 կրամ ծծմբի ծաղիկը լուանալէ
յեայ կէս լիդրա եռացած ջուր լեցը-
նելու է վրան եւ թողլու է երկու օր .
այնուհետեւ այս ջրով երեսին վէրքերը
լուանալու է օրը մէկ կամ երկու ան-
գամ . առաւուօտ եւ երեկոյ փոքր քա-
նակութեամբ ծծմբի ծաղիկ եւս ուտե-
լով՝ բժշկութիւնը կը փութեացուի :

ԱԿՌԱՑԻՑ ՏՐՈՒԵԼԻՔ ԽՆԱՄՔ

Եթէ կուզես որ փոքրիկ աղջիկդ աղ-
ւոր ակռաներ ունենայ , պէտք է հա-
նապազօրեայ խնամք տանիս երբ երկ-
րորդ անգամնորա ակռաները բռւսնին :

Պէտք է ամեն առաւօտ ծուռ բռւ-
սած ակռաները մատներովդ կանոնա-
ւորես , ետ մղելով զանոնք որ գէպ
յառաջ կը ցցուին եւ առաջ քաշելով
զանոնք որ յետս կը բռւսնին :

Ակռայները լուանալու համար , գա-
ւաթ մը ջրոյ մէջ եռացնելու է երկու
մասով բռնելու չափ՝ յինքինա եւ նոյն-
չափ ալ յամասի փոշի . այս հեղանիւթը
կը զօրացնէ լինաերը եւ կը ճերմիցնէ
ակռաները առանց նոյա փայլունու-
թիւնը եղծանելու : Ամեն կերակուրէ
վերջը բերանը ցօղուելու է գաղջ ջրով
որ պէտք է յառաջուց եռացուած ըլլայ :

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱԽԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Գիւղերու մէջ շատ անգամ հաւերը
կը ջարդուին բայց շատերը չեն գիտեր
թէ ոյք են թշնամիները . եւ սակայն շատ
դիւրին է ճանչնալ զանոնք վասն զի գի-
շակեր անասունք կամ թոչունք հաւերն
սպաննելու համար մասնաւոր կերպ
մ'ունին եւ ամենքն ալ հաւու մարմնոյն
մի եւ նոյն մասունքն չեն ուտեր : Թէ
որ հաւու ծագերը վզէն խածնուած են ,

նշան մ'է թէ թշնամին է կուղը (սանսար) կամ աքիսը (կէլինձիք). թէ որ ճագերուն միայն թեւերը եւ ոտքերը գտնաս, թշնամին կատու մ'է. իսկ կաչաղակը (սագսըղան) կամ ագռաւը նոցա գլուխը միայն կուտեն. այս նշաններէն թշնամին ճանչնալով կրնաս պէտք եղած միջոցներն ձեռք առնուլ զանոնք ջնջելու համար. անասնոց համար կրնաս զանազան տեսակ ծուղակներ գործածել, իսկ այն թռչունք որք շատ կասկածու են հրացանով միայն կրնաս ջնջել.

ՑՈՐԵՆԻ ՍԵՒԱԽԾԸ

Գաղղիոյ մէջ դիտեր են որ ցորենի սեւախտ կոչուած հիւանդութեան պատճառներէն մին է ծորենին (ամպէրաբարիս). այս տունկը որ ինքնին արժէք մը չունի, պէտք է խնամով փրցընել եւ փճացնել երբ ցորենի դաշտերուն մօտ տեղուանքը բռունի. Գաղղիոյ մէջ պաշտօնական ազգարարութիւններ եղած են այս մասին հողագործաց որպէս զի փոյթ տանին սոյն խորհուրդը գործադրել.

ԱԼԻՐՈՒԱԾ ՃԵՐՄԱԿ ԳԻՆԻՆ ԳԱՐՄԱՆՆԵԼ

Շատ անգամ ասրիւի սկիզբները երբ այգիները կը սկսին բողբոջիւ, ճերմակ գինիները կաւրուին, կը թանձրանան իւղի նման եւ իրենց համը կը կորսնցընեն:

Ահաւասիկ զանոնք դարմանելու եղանակը որ ի գործ կը դրուի Գաղղիոյ այլ եւ այլ գաւառաց մէջ:

Պէտք է մէկ լիդրա գետի աւազ առնուլ եւ չորցընել արեւուն մէջ. երբ լու մը չորցած է պէտք է տակառին ծակէն ներս լիցընել քիչ քիչ եւ միանգամայն ձկուն ու փոքրիկ գաւազաններով գինին խառնել. յետոյ թողլու որ երկու օր հանդարտի:

Աւազը իբրեւ քիմիական ազդակ ներդործելով, գինւոյ թանձր մասունքը տակառին խորը կը նստին եւ գինին կը վերստանայ իւր նախկին պայծառութիւնը ու համը:

ԸՄՊԵԼԻ ԶՈՒՐԸ ԶՏԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ

12 Լիդրա ջրոյ մէջ դնելու է 50 հարիւթերորդակրամ բերիցօրիւր ըլ ֆէր (perchlorure de fer) եւ 70 հարիւթերորդակրամ բիւրեղացեալ բարպօնաթ ըլ սուս (carbonate de soude cristallisé). Այս նիւթերը ջրոյ մէջ առկախ գտնըուած աղտեղութիւնները յատակը կիշեցընեն եւ 45 վայրկեանէն վերջը ջուրը ամենապայծառ կըլլայ:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ

ԹՂԹԻՆ ԱՐԺԱՄԱՆԱԿԵԱՅ
ԹԱՓԱՆՅՑԿՈՒԹԻՒՆ ՏԱԼ

Երբ ուղուի պատկերի, մը ծրագիրը թղթի վրայ հանել, կրնայ թղթին թափանցկութիւն տրուիլ թրջելով զայն պէնզինով որ ամենուն ծանօթ հեղուկ մ'է: Քիչ ժամանակէն վերջը պէնզինը կը ցնդի եւ թուղթը իւր նախկին վիճակին կը արագութեամբ ընդօրինակել երաժշտական նօրաները: Նօթայի համար պատրաստեալ թուղթ մը կառնուի մեծութեամբ եւ չափով յար նման օրինակին. իրարու վրայ կը դրուին եւ վրձինով մը պէնզին կը քսուի օրինակելի թուղթին վրայ. այս վերջինը կատարեալ թափանցիկ կըլլայ որով նօրաները դիւրութեամբ կընդօրինակուին. հասարակ կամ չինի մելանը լաւ հետք մը կը թողու պէնզինով թրջած թուղթին վրայ: Թուղթը չորնալով առաջնուած պէս անթափանցիկ կըլլայ. իսկ օրինակը այս գործողութենէ բնաւ հետք մը կամ վաս մը չիրեր:

ՓԱՅՏԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ

Որպէս զի արուեստից համար գործածուած փայտը չճաթուի եւ երկայն առեն պահպանուի պէտք է պատրաստել զայն հետեւեալ կերպով որ շատ պարզ եւ միշտ յաջողուած է :

Զրոյ մէջ սովորական ալ հալեցնելով կարելի եղած քանակութեամբ պէտք է ութ օր նորա մէջ թրջոցը դնել փայտը որ այս կերպով պատրաստեալ օդոյ փոփոխութեանց եւ խոնաւութեան ընդ երկար կը դիմադրէ :

ՓԱՅՏԻ ՀԱՄԱՐ ՍԵՒ ՆԵՐԿ

Փայտին սեւ ներկ տալով երենոսի (ապանօղ) նմանցընելու համար հետեւեալ բաղադրութիւնը կրնայ գործածուիլ :

Հինգ քիլոկրամ զրոյ մէջ 250 կրակամպեկենի փայտ (պագամ աղաձը) կէս ժամու չափ եռացընելէ վերջը՝ աւելցուր վրան 15 կրամ երկաթի ծծըմբատ (sulfate de fer) եւ այս բաղադրութիւնը տաք տաք փայտին վրայ զարկ ։ չորնալցն յետոյ երկրորդ եւ երրորդ ձեռք մըն ալ զարնելու է ։ թէ որ փայտին ջրդեղ (վէրնիչ) տալ հարկ է, պէտք է ջրդեղին քիչ մը սեւ ներկ խառնել որպէս զի զուտ սեւ գոյն մի ստանայ :

ՍՈՍԻՆՉԻ ՓՈՐՁԸ

Այն գործաւորք որք իրենց աշխատութեանց մէջ ստէպ սոսինձ (թութքալ) գործածելու հարկին մէջ կը գըտնուին, կրնան հետեւեալ պարզ եւ դիւրին փորձով ստուգել սոսինձին լաւ կամ գէշ տեսակէ լինելն :

Պէտք է երկու լիդրա պաղ զրոյ մէջ թրջել 40 կրամ սոսինձ 12 ժամու չափ ։ թէ որ սոյն ժամանակամիջոցի մէջ սոսինձը հալի, նորա տեսակը գէշ է եւ արդէք չունի, իսկ ընդհակառակն եթէ ուռենայ առանց լուծուելու եւ իւր

նախկին ծանրութեան կրկինը կշռէ, այսինքն եթէ իւր ծանրութեան չափով ջուր ծծէ, ազնիւ տեսակէ ըլլալուն նշան է, եթէ 160 կրամ կշռէ շատ ազնիւ է, թէ որ մինչեւ 200 կրամ կշռէ սմենազնիւ է ։ յորմէ կը հետեւի թէ սոսինձը որչափ աւելի ջուր ծծէ, այնքան ազնիւ ըլլալուն ստոյգ ապացոյց մ'է :

ՄԵՏԱՂԱՑ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

Ահա շատ պարզ եւ դիւրին եղանակ մը ամեն տեսակ մետաղները ժանգէ պահպանելու համար :

Անգղացիք հեռու երկիրներ դրկըռելիք երկաթէ եւ պողպատէ գործիները անարատ պահպանելու համար կրային փոշի կը ցանեն անոնց վրայ եւ կամ կրային ջրոյ մէջ կը թաթիւնն թանգէ (թէնէքէ) շինուած իրերն ալ այս եղանակաւ փայլուն եւ անարատ կը պահպանուին ։ Մարդ մը չկայ որ թանգէ, կամ պողպատէ շինուած այլ եւ այլ գործիներ եւ կամ ջերմոցի համար երկաթէ խողովակներ չունենայ ։ այս ամեն իրերը կրային ջրոյ մէջ թաթիւնելով կամ այդ ջրով պարզապէս լուսալով երկար ժամանակ կը դիմանան առանց ժանգոտելու :

ՍԱԹԸ ԲԱՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ

Սաթը (քէհրիպար) կարծր եւ դիւրաբեկ ըլլալով գժուար է զայն յլկել բանելու համար ։ սակայն կան գաղտնիքներ որ սոյն գործողութիւնը շատ ըը դիւրացընեն ։ կտաւատի տաքցած իւղը (պէզիր եաղը) սաթը կակզացնելու յատկութիւն ունի այնպէս որ գրեթէ խմոր կը դառնայ ։ ուստի սաթը սոյն իւղին մէջ դնելով կը տաքցնեն եւ ապա ճնշման միջոցաւ ուզուած զանազան ձեւերը կուտան անոր :

Նաեւ Սաթի բեկորները այս եղանակաւ կակզացնելով միակտուր զանգ-

ուած մը կը կազմեն զրոյ յետոյ կը բա-
նին իրր բնական հանքէն ելած կտոր մը :

ՄԵԼԱՆԸ ՄԳԼՈՏՈՒԹԵՆՅ ՊԱՀՊԱՆԵԼ

Մելանը մգլոտութենէ պահպանելու
ամենէն դիւրին միջոցն է կէս լիդրա
մելանի մէջ կաթիլ մը խայծղանի ոգի
(քաթրան րուհու) դնել եւ ցնցել որ-
պէս զի լաւ մը խառնուի :

Այս նիւթին յաւելումն, որ ոչ գրիշ-
ները կապականէ եւ ոչ մելանի լաւ-
ութեանը կը վնասէ, մելանը մգլոտու-
թենէ զերծ կը պահէ երկար ժամա-
նակ :

ՊԱԴ. ԱՐԾԱԹԱՋԾՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՄԲ

Այս եղանակը շատ յարմար է մասնա-
ւորապէս երկաթը, պողպատը, պղինձը
եւ արոյրը արծաթապօծելու համար :

Մէկ լիդրա թորեալ ջրոյ մէջ հալե-
ցընելու է մէկ քիլօ պիսիլիֆիթ ըլ սուս
(bisulfite de soude). եւ զատ ամանով
200 կրամ թորեալ ջրոյ մէջ 60 կրամ
ազօթաթարթան (azotate d'argent)
լուծելով խառնելու է առաջին հեղա-
նիւթին հետ :

Արծաթապօծելիք իրերը լաւ մաք-
րելէ յետոյ վերոյգրեալ եղանակաւ պատ-
րաստուած հեղու կին մէջ պահ մի թաթ-
խելու է :

Երբ արծաթով օծուած են, իրերը
գուրս կը հանուին եւ քիչ մը քարպօ-
նաթ առ սուս պարունակով ջրոյ մէջ
լուանալէ յետոյ, մաքուր ջրով լաւ մը
ցողուելու եւ փայտի սղոցուքի (թալաշ)
մէջ չորցնելու է :

Լաւ է սոյն հեղանիւթը քիչ քանա-
կութեամբ կամ պէտք եղածին չափ
միայն պատրաստել ամեն պարագայի
մէջ պէտք է մութ տեղ պահել եւ ե-
թէ պղասոր է, պէտք է դուել գործա-
ծելէ առաջ :

ՀԱԽԱՔԱԾՈՅ ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐՈՒ

Մեզ սոսկում ազդող ամեն բաներու
մէջ երկիւղն է միայն որ զհոգին կը յու-
զէ ամենէն աւելի ուժգին :

Թողլ բան մը զճեզ չվախցնէ, թողլ
բան մը զճեզ չվախցնէ, ամեն ինչ
կ'անցնի :

Երբէք մի յուսահատիք, բաղդը յան-
կարծ կը բարձրացնէ անոնք զրս ամե-
նէն աւելի խոնարհեցուցած էր :

Մի թողուք որ չարը ձեզ յաղթէ,
այլ գուք յաղթեցէք անոր բարիք ը-
նելով :

Դժբաղդութեան մէջ բաղդը միշտ
բաց գուռ մը կը ձգէ գուրս ելլելու
համար :

Բաւական չ'է արժանիք ունենալը՝
պէտք է հաճելի ըլլալ :

Գովաբանութիւնը ծնունդ տուած է
հաճելի ըլլալու արուեստին :

Երբ մէկը մեզ հաճելի է, շատ ան-
գամ գժուարին է մեզ բացատրել թէ
ինչո՞ւ համար է այն :

Իրականութիւնն անձուկ է, բայց
կարելին անհուն :

Երբ մարդ ամեն յոյս կորսնցնէ, այն
ատեն շերմագին ուխտեր կ'ընէ :

Պէտք չ'է որ արեւը դադրի զ'աշ-
խարհ լուսաւորելէ առարկելով թէ՝ իւր
ձառագայթները գիշերային թոշնոց
աշերը կը վիրաւորեն :

Երբ հալարտութիւնն առաջէն քայլէ,
ամօթ եւ թշուառութիւն մօտէն կը
հետեւին անոր :

Հպարտօրէն մի քայլեր աշխարհիս վը-
րայ, ոչ կրնաս զայն երկուքի բաժնել,
եւ ոչ անոր լերանց բարձրութեան հա-
ւասարիլ :

Հպարտութիւնն առատութեամբ կը
նախաճաշէ, աղքատութեամբ կը ճաշէ,
եւ ամօթով կ'ընթրէ :

Երբ մարդ ջանայ մէկուն նմանիլ,
պէտք է միայն անոր լաւ կողմերը առ-
նելու փոյթ տանի :

Գիտութիւնն ու խղճմտանքը քիչ անգամ միեւնոյն անձին վրայ կը տեսնըուին :

Գիտութիւնն առաքինութիւն չ'է :

Խելքը մարդս հաճելի կընէ, բայց առողջ ստամբուն է միայն զայն երջանիկ ընողը :

Մարդ միւր գերեզմանին մէջ՝ նաւահանգիստ հասած նաւ մ'է :

Վիշտը դար մ'է եւ մահը վայրկեան մը:

Տարիները սանդուխի աստիճաններ են, որ կը փլին երր մարդ անոնցմէ վեր ելէ :

Երբ Ֆօնդնէլ մահամերձ էր, հարցուցին իրեն թէ՝ ի՞նչ կ'զգար. «Ոչինչ, պատասխանեց նա, միայն ապրելու դժուարութիւն մը» :

Մարդու մը երջանկութիւնն իւր տան մէջ է :

Մեծատանց հարստութիւնը, դիւցազանց փառքը, արքայից ձոխութիւնքն բոլորն ալ կը վերջանան «Աստ հանգի» բառերով :

Իմաստուն մտքի մը, մաքուր խղճի մը համար, մահը կենաց սահմանն է միայն, այսինքն գեղեցիկ օրուան մը երեկոյն :

Սոկրատ ուրախութեամբ հեռացաւ աշխարհէս, որովհետեւ հոն կը թողուր Քսանտիբէ, իւր կինը :

Երբ կը մտածեմ ըսածներուս վրայ, որքան կը փափաքիմ համբերու բաղդին :

Տ. 20Պ.Ն.ԽԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍԱՏՈՒԿԱՆԵՐՆ ՊԵԼՃԻՈՑ
ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ

Յայտնի է թէ Եւրոպիոյ ամեն քաղաք եւ նոյն իսկ շատ մը գիւղեր ունին իրենց խնայողական սնտուկներն, ուր կարող է տանիլ աղքատուր իւր խընայած փոքրիկ գումարն եւ շահեցնել

անդ իր կամ իր ընաանեաց ապագային համար : Ամեն երկիր, ամեն կառավարութիւն կը քաջալերեն ժողովրդեան խնայողութեան եռանդը եւ օր ըստ օրէ գիւրութիւններ կը նշանաւ ինայողական սնտուկներու ծաւալման համար . ինչպէս որ վերջին տարիներս ալ տնտեսագէտք ումանք որոշեցին խնայողութեան գործնական դաս մը յաւելցնել նախնական գպրոցներու մէջ եւ այսպէս ի մանկութենէ ժողովուրդը խնայողութեան վարժեցնել :

Պէճիգայի մէջ՝ ուր դաստիարակութիւնը Զուիցերիոյ նման ապակեդրոնացական ըլլալով ուրիշ շատ մը երկիրներէ աւելի առաջ գացած է, 1885 դեկտեմբերի վերջը 7022 գպրոցներ կը յաճախէին 827670 տղայք, որոց 416, 513ը մանչեւ 411157 աղջիկ . այս գըպրոցներուն 4697ին մէջ խնայողութիւնը փորձառարար կը գործադրուէր, ուր 153416 տղայք (75909 մանչ եւ 57507 աղջիկ) օրինաւոր տեսրակով եւ 38634 տղայք (20897 մանչ եւ 17737 աղջիկ) տանց տեսրակի, խնայողութեանց կը մասնակցէին . այսինքն շարթէ շաբաթմէկ մէկ փոքրիկ գումար կը յաւելցնէին իրենց համար գպրոցի խնայողական սնտուկին մէջ . այնպէս որ յիշեալ թըռուականին գպրոցական տղայց խնայողութեանց ընդհանուր գումարն եղած էր 2838835 ֆրանք . որոյ 1600467 ֆրանքը մանչերու եւ 1258368ը աղջը-կանց կը վերաբերէր :

ՏԻ ՇԲԱՐԲԱԾ

ԿԵՆԱՅ ՎՐԱՅ ԱՐՀԵՍԻՑԻՑ
ԱԶԴԻՅՈՒԹԻՒՆԸ

Դանակ շինելու արհեստը՝ կըսէ անգղիական թերթ մը, ամենէն վասակարն է առողջութեան եւ գանակ շինողներու մէջ անոնք որ դանակ, պատառաքաղ եւն կը սրեն եւ կը փայլեցնեն, ամենէն աւելի կը փաստուին :

անոնց լերդը՝ ինչպէս մեռնելէ յետոյ փորձուած է, բոլորովին կը սեւնայ իրը թէ մելանի մէջ թաթխուած ըլլար, եւ լերդին միաը՝ որ սպունգի պէս պէտք է ըլլայ, կօմելասիսի երեւոյթ մը կըստանայ, որ է հետեւանքն պողպատի եւ սրոց քարի բարակ փոշիներուն։ Կապարագործութիւնն ալ նոյնպէս վիասակար արհեստ մ'է, որով զբաղողներն քիչ կամ չատ կապարաթոյնով կը թունաւորին ժամանակէ մը յետոյ։

Հետեւեալ ցուցակին՝ որ Անգղիոյ վըրայ շինուած է, կը տեսնուի զանազան արհեստից ազդեցութիւնը կենաց վրայ ։ այսինքն թէ՝ նշանակուած զանազան արհեստից հետեւողներէն միջին հաշուով տարին 1000 հոգիէն քանի հոգի մեռնին։

- Պանդոկի սպասաւորք 23
- Փողոցի աշխատաւորք 20
- Խմելիք ծախողներ 18
- Խարտոց շինողներ 15
- Ծխնելոյզ մաքրողներ 14
- Սափրիչք 14
- Գարեջուր շինողք 14
- Բժիշկք 12
- Ներկ շինողք 11
- Դերձակք 11
- Կտաւագործք 10
- Ներկարարք 9
- Հաց եփողք 9
- Կոշկարարք 9
- Հանքածուխ հանողք 8
- Թիթեղագործք 8
- Օրէնսդէտք 8
- Մեքենաշէնք 8
- Հիւսն 8
- Նպարավաճառք 8
- Նաւաշէնք 7
- Ագարակի գործաւորք 7
- Ագարակապետք 6
- Դասատուք 6
- Պարտիզանք 5
- Կղերականք 5

ինչպէս կերեւայ, ամենէն առողջ զբաղմունքը պարտիզանութիւն եւ կղերականութիւնն են եղեր։

ԽԱՐԴԱԽԵԱԼ ՎԱՃԱՌԻՔ Ի ԲԱՐԻԶ

Ցունքար ամսոյ մէջ Բարիզի թաղապետութեան տեսուչք վաճառանոցները եւ խանութները այցելելով 1646 տեսակ ապրանքներ քններ են տարլուծութեան ենթարկելով։ Սոյն քննութեանց արդիւնք են հետեւեալներն։ 579 քննուած գիններու միայն 220ը լաւ եւ մնացեալներն խարդախեալ էին, նոյնպէս 48 ոգելից ըմսելեաց 24ը լաւ, հանքային եւ այլ ջուրերու 88ին 75ը լաւ, 425 կաթին 598ը լաւ, եւ 92 շաքարեղինաց 54ը միայն լաւ գտնուեր են։ Աստի կրնանք մակարերել որ եթէ թաղապետութեան խիստ հսկողութեան ներքեւ Բարիզի հրապարակին վրայ սպասուած ապրանք գրեթէ կէս տռ կէս խարդախեալ են, հապաւ օտար երկիրներէ բերուած եւ մեր հրապարակին վրայ ծախուած ապրանքներն ո՞ր աստիճան կեղծ եւ արուեստակեալ են, որոց համար մեք բազում ստակ տալով մեր առողջութեանն ալ կը վնասեմք։

ՇՈԳԵՆԱԻՆԵՐՈՒ ԹԻՒԾ 1887ԻՆ

Անցեալ տարի աշխարհիս վրայ գտնըուած ընդհանուր շոգենաւուց թիւն է եղեր, 9967 ։ որոց 8198ը երկաթէ, 879ը պողպատէ եւ 892ը փայտաշէն ըլլարով՝ կը վերաբերէին հետեւեալ ազգաց

5792 Անգղիոյ

579 Գերմանիոյ

560 Աւստրիոյ

509 Գաղղիոյ

401 Ապանիոյ

400 Միացեալ նահանգաց

257 Նորվէկիոյ

212 Իռուսիոյ

200 Տանիմարքաի

173 Իտալիոյ

- 152 Հոլանտափ
 141 Պրազիլիոյ
 145 Ճարոնի
 82 Տաճկաստանի
 82 Յունաստանի
 68 Պէլճիքափ
 45 Չիլիի
 45 Արժանթինի
 27 Զինաստանի
 27 Բօրթուքալի
 21 Ճավայի
 63 Զանազան աղգաց

ԱՇԽԱՐՀԻՍ ՄԵՔԵՆԱՑԻՑ
 ԶՈՐՈՒԹԻՒՆԸ

Պէրլինի վիճակագրական պաշտօնատունը՝ աշխարհիս մէջ գտնուած շոգեշարժ մեքենայից զօրութեանց վերայ տեղեկութիւններ հրատարակած է յորմէ կը քաղեմք հետեւեալները։ Արդի գործածուած մեքենայից չորս հինգերորդը՝ քսան եւ հինգ տարի է ի վեր կը ծառայեն։

Գաղղիա ունի 49,590 հաստատուն մեքենայք, 7000 շոգեկառք եւ 1850 նաւային մեքենայք։ Գերմանիա 59000 հաստատուն մեքենայք, 10000 շոգեկառք, եւ 1700 նաւային մեքենայք։ Աւստրիա 12000 մեքենայք եւ 2800 շոգեկառք։

Շոգեշարժ մեքենայից ամբողջ զօրութիւնն է 7,5 միլիոն ձիու զօրութիւն ի Միացեալ նահանգս, 7 յԱնգղիա, 4,5 ի Գերմանիա, 3 ի Գաղղիա եւ 1,5 յԱւստրիա։ Այս թիւերէն գուրս են շոգեկառաց զօրութիւնք որոց թիւը 105000 ի կը հասնի ևս որոց ամբողջին զօրութիւնն է 3 միլիոն ձիու ոյժ։

Շոգեշարժ մեքենայից մէկ ձիուն զօրութիւնը հաւասար է 3 կենդանի ձիու կամ 21 մարդոց զօրութեան։ այս հաշուով աշխարհիս մեքենայից ամբողջ զօրութիւնը կը հաւասարի հազար միլիոն մարդոց զօրութեան որ երկրագնտիս բնակչացաց երկու երրորդ մասն ըսել է։

ՊԱՐԱՊՈՅ ԺԱՄԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Հ Ս Կ Ո Ղ Ա Զ Ք

Կը տեսնէք թէ քիչ մը նախանձոտ բնաւորութիւն ունիմ, բայց կը յուսամ թէ չէք մեղադրեր մէկը՝ որ պատճառ կունենայ նախանձոտ ըլլալու։ Կին մը փայտ, քար կամ արձան ըլլալու է որ նախանձոտ չըլլայ, մանաւանդ երբ լաւ պատճառներ ունենայ, այնպէս չէ, ես երբեք չեմ նախանձիր առանց պատճառի, բայց երբ պատճառ ունենամ...։

Ես վստահ եմ թէ ամուսինս մարդկանց ընտրելագոյնն է, բայց մարդկանց ընտրելագունին իսկ չի վստահացուիր, գէթ այսպէս կըսէ իմ ազնիւ կեսուրս, զոր չատ կը սիրեմ հակառակ այն ընդհանուր կանոնին՝ որով հարսերը սովորաբար կէս աւուր բերել կուզեն իրենց կեսուրնին։

«Մէլինտա» ըսաւ կեսուրս մեկնած պահուն, մինչ իր վաղածանօթ մէկ բարեկամուհոյն կերթար օրն անդ անցընելու համար, «մէկ գոհունակութիւն մը կրնաս ունենալ թէ եդուարդ մարդկանց ընտրելագոյնն է, գու երբէ քդուարութիւն չի պիտի ունենաս անոր հետ վարուելու համար»։

Կեսուրոջս ընկերացայ մինչեւ փողոցին գուռու, ոտքս հագած էի այն թեթեւ բանրութները, որք՝ կակուղ նիւթէ շինուած ըլլալով, ձայն չեն հաներ քայլուած ատեն եւ որոցմով կերթար սովորաբար ննջարանը՝ տղայոց քունը չի վրդովելու համար։ ճիշտ այն միջոցին էր որ տեսայ թէ Հեղինէն նստելու սենեակը կը մտնէր կամացուկ մը ինչպէս ինձ թուեցաւ, ձեռքն ալ նամակ մ'ունենալով, անմիջապէս աղջիկը դարձեալ գուրս ելաւ, բայց ես իմացայ որ եդուարդին բան մ'ալ ըսաւ։ Սիրտս սկսաւ վրդովիլ չեմ գիտեր ինչու, կարծեմ իմ քաշելիքներուս նախազգացութիւնն էր։ սիրտս բերանս էր եկած էւ ես սենեակը մտած էի

անզգալաբար առանց շնկոց մ'իսկ հանելու, յիրաւի պէտք է խոստովանիմ թէ շատ թեթեւ քալեցի եւ արդէն բնականէն ալ մանրուկ եւ թեթեւոգի ըլլալով քալած ժամանակս բնաւ ձայն չէր ելլեր, այսպէսով առանց իմացուելու մէկէն ի մէկ եղուարդի դիմացն ելայ՝ ճիշդ այն վայրկենին երբ նա փոքրիկ նամակ մը գիշերահագուստին գրապանը կը պահէր:

Երեսը նայեցայ. այս երեսը նայեցայ ուշադրութեամբ, բայց բնաւ հարցում մը ըսրի, քանզի գիտէի՝ եթէ կասկածս անհիմն ըլլար, թէ նա պիտի ըսէր ինձ նամակին ուսկից ըլլալը. ուստի սպասեցի, բայց բան մը ըսսաւ եւ ոչ իսկ բառ մը: Իմ երեւակայութիւնս էր թերեւս որ նա յանցաւոր կերեւար, բայց ոչ. յանցաւոր կերեւար նա: Այսու հանդերձ անխոսով կեցայ, շատ անխոսով, մինչ ժամանակին անցնելով հասկցայ թէ պիտի երթար առանց ինձ բան մ'ըսելու նամակին վըրայ: Ընելիքս որոշեցի, հաւանականաբար ինք պիտի մոռնար հագուած ատեն նամակը իր գիշերահանդերձին գրապանէն առնելու, քանզի մոռացկոտ եւ միտքը գործով շատ զբաղած էր. բայց եւ այնպէս ուղեցի որ արդելք ըլլամ եթէ միտքն ալ իյնայ. վասնորոյ որոշեցի անձամբ օգնել իր գիշերհանդերձը հանելու:

Կերջապէս ժամը ութ զարկաւ, որ իր մեկնելու սովորական ժամն էր, աթուէն ելաւ, գնաց ուղղակի իր սիկառին մնացորդը թօթվեց մոխրոյ պնակին մէջ՝ որ դրուած էր պիտոյին վրայ, եւ իր գրապանի ժամացոյցն նայելով երերոկաց եւ ըսաւ « կարծեմ ժամ է մեկնելու » :

Այս ամենը գիտեցի մեծ համբերութեամբ, վայրկեանները ժամերու չափ երկար կուգային ինձ. հուսկ ուրեմն երբ սկսաւ գիշերահանդերձը հանել մօտեցայ եւ ուղեցի օգնել իրեն, առել

գիշերահանդերձն եւ քիչ մը հեռու տանելով գամէն կախեցի եւ այնպէս ըրի որ ես՝ իր եւ հանդերձին մէջ տեղը գտնուիմ, որպէս զի աչքէն վրիպի մինչեւ որ տունէն մեկնի: Գլխարկը դրած պահուն զիս համբուրեց. իսկ ես դեռ բաւական չէի գիտեր թէ արդեօք մերժեմ իրեն այդ առանձնաշնորհը. բայց մտածեցի, այս մտածեցի, ընեմնէ ինչ կըլլայ:

Պատուհանէն հսկեցի մինչեւ որ կառքը մտաւ եւ ելայ անմիջապէս սենեակին գուռը կղպեցի, գիշերահանդերձը առի եւ ձեռքս գրապանը խօթելով դուրս հանեցի նամակը. փոքր վարդապոյն թուղթ մը, առանց պահարանի, քիչ մը ոլրուած ու ծալլուած, մատիառով գրուած՝ բնաւ կոկիկ գրութիւն մը չէր, նստայ վառարանին առջեւ եւ կարդացի —

« Նայէ որ չի մոռնաս, ապա թէ ոչ պիտի կարծեմ թէ Մէլինտա բոլրոսվին քու միտքդ յափշտակած է ինձմէ. սիրելիս գու առաջ միշտ ուշադիր էիր իմ խօսքերուս. Մեծ հրապարակին վրայ 397^{րդ} թիւն է: Վ Ա.

Յ. Գ. Ժամը իննէն անդին չի մնաս:

Ահա ամենը . . . , այս բաւական չէ. ոչ ոք կրնայ ըսել թէ զուր տեղ կը նախանձիմ: Այս կինը՝ եւ անտարակոյս կին մ'է որ կը գրէ « իմ սիրելիս եթէ մոռնաս », ինչ որ հարկաւ իրենք նախապէս համաձայնած են, պիտի կարծէ եղեր թէ՝ « Մէլինտա » այսինքն ես որ իր օրինաւոր պսակեալն եմ, « յափշտակած եմ » զինքը իրմէն: Ասկից մեծ ապացոյ մը չէր կրնար ըլլալ. բայց եւ այնպէս եթէ ես զինքը բացարձակապէս իրեւ անհաւատարիմ ամբաստանեմ ինձի գէմ, ինք պիտի ըսէ թէ « նամակը էրիկ մարդ բարեկամէ մի է », եւ ես անկարող կըլլամ հակառակն ապացուցանել: Վասնորոյ որոշումս ըրի, միտքս գրի մօտէն հսկել

զինքը՝ երթալով նոյնպէս 597^{րդ} թիւը
որոշեալ ժամուն :

Կրնաք երեւակայել թէ ինչպիսի օր
մը անցուցած եմ: Բնաւ գործի մը չի
կրցայ նայիլ, միայն կը պարտէի ու կու-
լայի, դէմքս այնչափ այլայլած էր որ
վախցայ թէ երբ եղուարդ երեկոյին
տուն դառնայ, անպատճառ պիտի կաս-
կածի վարմունքէս. ուստի գացի ան-
կողինս մտայ եւ ապապրեցի Հեղինէին
որ եկած ատենը, եղուարդի ըսէ թէ
ջլային գլխու ցաւս սաստիկ բռնած
ըլլալուն պառկած եմ. ուստի թողսե-
նեակս չի խառնէ որպէս զի քունս տա-
ներով հանգստանամ. այս պատուէրն
ընելէ յետոյ դուռս կղպեցի:

Եղուարդ եկաւ որոշեալ ժամուն եւ
իմ տկար ըլլալս իմանալէն ետքը՝ ինչ-
պէս կը գուշակէի, զարդարուեցաւ մեկ-
նելու համար. ես ալ ձիշդ այն միջոցին
կամացուկ մը սենեակէս ելլելով գացի
դռան ձեղքէն զինքը գիտելու եւ՝ ե-
թէ իմ կասկածանացս ուրիշ փաստ
պէտք ըլլար, այն ալ տեսայ երբ նա-
գնաց վար առնելու իր գիշերահանդեր-
ձը, զոր ես՝ խեղճ, նախատեալ կին,
իմ ձեռօքս շինած էի իր ծննդեան վեր-
ջին տօնախմբութեան առթիւ իրբեւ
նուէր, եւ պէտք է գիտնալ որ տասը
երկար տարիներ մէկաեղ ապրած էինք
եւ ինքն ալ քառասուն տարեկան մարդ
էր, ուստի անհաւատալի էր թէ ոյլ
եւս ուրիշ մը զինքը կրնար գլխէ հա-
նել:

Այո՛, վար առաւ այն գեղեցիկ հան-
գերձը, զոր իմ ձեռօքս պատրաստած
էի այնչափ խմանօք եւ գիշերային տըք-
նութեամբ, որպէս զի իրեն ուրախու-
թիւն մը պատճառէմ. գրագանէն հա-
նեց վարդապոյն նամակը, կարդաց պա-
տուհանին առջեւ եւ բաճկոնին գրապա-
նը դրաւ. յետոյ վերարկուն, գլխարկն
եւ ձեռնոցներն առնելով մեկնեցաւ...
երթալ անոր, Մ-Ա-ի որ գրած էր նա-
մակը: Բայց Ե՞ս համապատաս ալ

պիտի երթայի նաեւ, զայս միտքէն չէր
անցներ նա, չէր կասկածեր բնաւ:

Եղուարդ դեռ փողոցին անկիւնը չի
դառցած՝ ես երկար մեծ մանրոս հա-
գոյ եւ գլուխս չալ մը առնելով պըլ-
լուեցայ անձանաչելի կերպով, ամեն
բան պատրաստած էի առաջուց, ուստի
անմիջապէս դռնէն դուրս ելլելով կարո-
ղացայ համնիլ թռամնէյի այն կառքին
ուր ինքն ալ նստաւ, ժամանակն սկսած
էր մութնալ եւ ես անձանաչելի էի
կատարեալ. ով գիտէ, զիս աղախին
գիտցաւ ինչ գիտցաւ. ինք մէկ ան-
կիւնը նստած էր՝ հարկաւ չարածմի Մ-
Ա-ի վրայ կը խորհէր, ես միւս անկիւ-
նը նստած բաւական հեռի էի իրմէ:

Կառքը կայնեցաւ եւ երկուքնիս ալ
ելանք գնալու, բայց ես չէի կրնար ա-
նոր ետեւէն համնիլ, այնչափ աճապա-
րանօք եւ անձկանօք կերթար ինչ-
պէս ժամանակ մը ինձի կուգար երբ
ես անմեղ եւ անփորձ աղջիկ մ'էի, եւ
մոքէս անգամ չէի անցներ թէ այս
պիտի ըլլայ մեր սիրոյ վախճանը, վեր-
ջապէս նա ինձմէ շատ առաջ հասաւ
397 թիւը, տեսայ հեռուէն որ կին
մարդ չէր գուռը բացողը, այլ մշակ
մ'էր որ ներս առաւ զինքը, իմ ամու-
սինս:

Կարծեցի թէ կեցած տեղս պիտի
մարիմ իյնամ. բայց յիրաւի այն ատեն
հասկցայ թէ կարծածէս աւելի զօրու-
թիւն ունիմ եղեր: իյելքս գլուխս
ժողուեցի եւ սկսայ մտածել թէ ինչ
ընեմ. արդեօք երթամ դուռը զար-
նեմ եւ բացուելուն պէս վազեմ սեն-
եակը մտնամ, կամ արդեօք մշակին
ստակ տամ եւ զինքը որսամ որ թոյլ
տայ ինձ երթալ կամացուկ մը սենեա-
կէն ներս նայիլ եւ կամ՝ որովհետեւ այլ
եւս չարժէր որ ապրիմ, արդեօք եր-
թամ գետը նետուիմ եւ վերջ տամ այս
թշուառ կենացս: վերջապէս որոշած
էի զայս ընել երբ յանկարծ տանը դուռ-

ուր բացուեցաւ եւ ամուսինս դուրս եւ-
լաւ թեւը կին մը առած, շատ ծած-
կուած էր կինը որով չի կրնալ դէմքը
տեսնել. բայց տեսայ թէ եգուարդ
որչափ խնամք կը տանէր անոր: Ես ալ
կամաց մը սկսայ ետեւնուն երթալ եւ
ունկն դրի կրցածիս չափ իրենց խո-
սակցութեանը. կնոջը ձայնը չի կրցի
լսել, բայց լսեցի ամուսնոյս ձայնը որ
կըսէր, « եկած ատենս դարձեալ Մէ-
լինտաի գլխուն ցաւը բռնած էր » յե-
տոյ բան մալ ըսաւ զր չի լսեցի, բայց
հարկաւ պարձենցաւ թէ ինչպէս զիս
խարեր եւ առանց իմ գիտութեանս ե-
լեր եկեր էր: Քիչ մը վերջը նորէն լսե-
ցի սա խօսքերը « տանը թիւը բալորո-
վին մոռցած էի, եթէ նամակդ պա-
հած չըլլայի բնաւ քեզ չի պիտի գըտ-
նայի » :

Երկուքը թեւ թեւի ճամբուն միւս
կողմը անցան եւ թռամիչյի կառքը
նստան, ես ալ անմիջապէս ցատկեցի
հոն ելայ: Մեր տան մօտ անկիւնը կառ-
քէն իջան, ես ալ բնականաբար վար
իջայ: Բայց ո՞ւր է արդեօք այս ինոջ
տունը, արդեօք մեր տան դիմացը
նստող այն համարձակ կի՞ննէ, որ միշտ
ասոր անոր երեսը կը ինդայ, կամ
արդեօք մեր քովի տունը նստող որ-
բեւարին է, որոյ վրայ միշտ կը կաս-
կածէի:

Վերջապէս եկան մեր տանը դուռը,
այն, մեր տանը դուռը եւ դուռը զար-
կին. Ի՞նչ կը նշանակի այս:

Նոյն միջոցին էր ահա Տիկնոջ ձայնն
ալ ասի որ կըսէր « կը յուսամ թէ Մէ-
լինտա աղէկ է, ասպա թէ ոչ զօրաւոր
թէյ մը շինել տամ անմիջապէս » :

Ոհ կեսուրոջն ձայնն էր, հիմա հաս-
կըցայ ամեն բան: Ինք ուզեր էր որ
գացած տեղէն որդին զինքը բերէ ե-
րեկոյին, բայց որովհետեւ մոռացկոտ
էր նա, ուստի թուղթի մը վրայ գրե-
լով աղասինին հետ իրեն զրկեր է որ
չի մոռնայ, իսկ ստորագրութեան ՄԱ

դրուելուն պատճառն այն է որ տղան
միշտ ՄԱ կոչէր մօրը՝ որ մասնաի կըր-
ճատեալն է, յիրաւի նամակին մէջ
պէտք չի կար ըսել թէ Մէլինտա միտ-
քը յափշտակած էր, բայց մայր մը միշտ
մայր է մինչեւ մէկ աստիճան, ամենէն
աղէկն ալ այնպէս է:

Մեծ քար մը ինկաւ սրախս վրայէն,
եւ անոնք գեւ զիս չի աեսած ես մե-
կէն զիրենք բարեւեցի:

Մէլինտան է ըսաւ կեսուրս. « ա-
սանկ ուշ ատեն դուրսէն կուգաս, »
ըսաւ եգուարդ:

« Այս », ըսի « մտածեցի թէ քիչ մը
օդ առնելն օգտակար կրնար ըլլալ ցա-
ւոց, եւ յիրաւի այնպէս եղաւ » :

Անտարակալոյս յիմարութիւն պիտի
ըլլար ծիշդը ըսել, եւ յիրաւի ես ալ
քիչ մը քիչ չի խաղնեցայ ինքիրմէս:

ՅԱՆԳԱԿԵՐԵՆԵ

Զինուորական բանակի մը բժիշկը
գիշեր մը իր վրանը պառկած ատեն,
կը լու որ դուրսը կեցող պահապան զին-
ուորը սաստիկ կը հազար: Հազին ձայ-
նէն չի կրնալով քնանալ կը մտածէ թէ
ազգու գեղմը տալու է որպէս զի մար-
դուն հազը կարելով իրեն ալ քունը
տանիկ կելէ անմիջապէս գեղմը կը պատ-
րաստէ եւ զինուորին երթալով կը հրա-
մայէ որ խմէ: Զինուորը կը մերժէ
գեղմը խմել՝ նախ քաղաքավարութեամբ,
յետոյ բարկութեամբ եւ ապա թախան-
ձանօք, բայց ի զուր քանզի բժիշկը
զինուորաց գեղ անօրինելու մասին,
բացարձակ իրաւանց տէր ըլլալով,
բռնացաւ զինուորին վրայ, որ հուսկ
ուրեմն պարտաւորեցաւ խմել:

Բժիշկը տեսնելով թէ հետեւանքը
գոհացուցիչ եղաւ՝ քանզի հազի ձայնը
իսկոյն դադրեցաւ բանակին մէջ, բարի
գործ մը ըրած ըլլալու գոհունակու-
թեամբ քնացաւ հանգիստ սրախս:

Առաւոտուն բանակին հրամանատարը

կանչեց բժիշկը եւ ըստաւ իրեն, «Ի՞նչ է
այս պարոն, գանգատաներ կը լսեմ պա-
հապան զինուորաց կողմանէ ձեր մա-
սին. անոնցմէ մէկը տեղեկադիր մը բե-
րեր է՝ թէ դուք գիշեր ժամանակ ձեր
վրանէն ելլելով ամեն նախատինք տե-
ղացուցեր էք մարդուն գլխուն, ինք
կըսէ թէ բան մը խմցուցեր էք իրեն
որ թոյն ըլլալու էր»:

Հասկցուեցաւ թէ՝ բժիշկը գեղը պատրաստելու պահուն, հազարող պահապան զինուորին ժամը լրացեր եւ փոխուելով տեղը ուրիշ զինուոր մէր եկեր, ուստի գեղը սխալմամբ տուեր է այս վերջնոյն որ առողջ էր եւ բան մը չունէր։

Մեր խոհարարը՝ վանայ Ալիւր գիւղէն, մեծ հօրս օրէն մնացած տան հաւատարիմ սպասաւորն էր, որ երբեք չէր հիւանդացած: Օր մը յանակնկալս հիւանդացաւ գլխու սաստիկ ցաւով մը եւ տաքութեամբ. տանը բժիշկը լուսահոգի Ալթունեան Համբարձում աղա, կանչուելով տեսաւ թէ ծանր բան մը չէ, ուստի թեթեւ գեղ մը եւ ոտքին հարտալ տնօրինելով գնաց: Դեղերն պատրաստուեցան եւ՝ որովհետեւ ուրիշ մարդ իր սենեակը չեր ուզեր, հիւանդին յանձնուեցան որ գործածէ:

Պահ մը ետքը սարսափելի տքալու
ձայնէ մը հասկցուեցաւ թէ հիւանդը
գէշ էր եւ իսկոյն բժիշկը կանչուելով
տեսնուեցաւ թէ խեղճ արարածը՝ ոտ-
քին տեղ, հարցալը գլխուն էր դրած։
Պէտք եղած գարսանն ընելով հարցուց
բժիշկը հիւանդին, «Ճօ ինչու գլխուդ-
դրիր հարցալը, յնանցար իմ պատուէրս
որ ոտքիդ դիր բախ։

«Հայ ալպս ոռքին ըսկիր ամա ես տե-
սայ ոտքս չի ցաւէիր, գլուխս կը ցաւի,
սիսալ հաւակցեր եմ ըսի հարտաշը գլուխս
պութեցի ։»

«Բարեգուշտ այսուհետեւ՝ ասիսկան առողջ

կազմուածք ունի, ապա թէ ոչ կեր-
թար » ըստ բժիշկը :

ԵՐԵՎԵՂԲՈՅՑՐԵՍՆ

Նոր ոճ : — Օրիորդ կը ներէք ինձ որ
ձեր ամուսնութեան հանգիսին գտնը-
ուիմ : Խ՞նչ կըսէք պարոն , ես դեռ նշա-
նած չեմ : Այո , բայց ես միայն հաս-
կընալ ու զեցի թէ արդեօք կրնամ իր-
բեւ փեսայ ներկայ գտնուիլ :

P. . Q. .

ՏԱՏԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՔ

Տնտեսի հրատարակութիւնը սոսկ
մարդասիրական գործ մշլալուն՝ ա-
նոր օգնելն ալ մարդասիրութիւն է.
վասն որոյ միշտ չնորհակալութեամբ
պիտի հրատարակենք անուններն այն
պատուական անձանց, որ կը բարեհա-
ջին օգնել մեր թերթի յառաջդիմու-
թեան եւ տարածմանը, նախորդներուն
պէս՝ այսօր ալ, կը հրատարակենք գո-
հունակութեամբ հետեւեալ ցանկն :
Աւագեան Միհրան էֆ. Զարշամազ
Թահմիզնեան Նշան » Սեբաստիա
Մալեզեան Ս. Ֆ. Օրիորդ Միջագիւղ
Մարինեան Սիմոն էֆ. Վառնա
Մէրամէթնեան Սեպուհ » Էտիքնէ
Զօպանեան Տիգրան » Պէջիթաշ
Տ. Գարրիէլեան Գրիգոր » Երիզա
Տիվանեան Համբարձում » Սամսօն
Քիւրքնեան Միհրան »

Քիւրքնեան է Քինտիի մասնաւոր չնոր-
հակալութիւն կը պարտինք, քանզի
ութը քաղաքներու գործակալութեան
պաշտօնը անձնուիրաբար ստանձնելէ
զատ, այս տարի դարձեալ իր Կողմանէ
մէկ մէկ տարեկան Տնտես նուիրած է
ութ վարժարանաց :

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ . Տ . Զ . Ն . Կ եմ լի յի կ . Մ եծ Ն որ
խ պի հ ամար ձ եր ու զած Տ նտեսներն

զրկուեցան այս հատորոց Ա. թիւէն սկսեալ:

Յ. Ա. Մ. Պաևումայ: Մեր մասնաւոր չնորհակալութիւն ձեր Տնտեսի Պատ. գործակալութիւնն ստանձնած ըլլալուն համար:

Գ. Տ. Գ. Երիզա: Ստացանք ձեր 10 մարտ 88 քառթ բոսդալն . որոյ պատասխանն արդէն տրուած է ժամանակին ձեզ զրկուած թիւ 4-5 Տնտեսի մէջ:

Յ. Դ. Ճինկվրա. 15/27 քառթ բոստալով ձեր ուզած Տնտեսն սկսաւ կըրկուիլ:

Ս. Կ. Ս. Երուաղեմ. 19 մարտ նամակաւ ստացանք 13 զրշի. նամակադրուով ձեր հաշւոյն. 2 անձանց համար ուղղուած Տնտեսներն պիտի զրկուին:

Թ. Գ. Տեսհական. 21 մարտ նամակաւ Ս. Է. ի համար ուզուած Տնտեսներն պիտի զրկուին:

Մ. Ք. Սամսօն. 26 մարտ նամակիդք ընդունեցինք. չնորհակալութիւն ձեր ազնիւ ջանիցն. Տնտեսի Ա. տարւոյ ձեր պակաս թիւերն մեր քով գտնուածներէն անմիջապէս պիտի զրկուին, իսկ մնացեալք կրկին տպագրուած տաեն Մ. Եղբարց Բ. տարւոյ ամրող թիւերն զրկուած են, նոյն թերթերն յետ այսորիկ ձեր ծրաբովն պիտի զրկուին:

Գ. Դ. Տ. Տիարպեֆիր. Ստացանք ապրիլի 10 քառթ բոսդալն. ձեր ուզած թիւերն ամրող պատահապէս զրկուած են. պատասխանն տրուած է 4-5 թիւ Տնտեսի մէջ:

Յ. Գ. Զմիւռնիա. 26 մարտ նամակաւ ստացանք 21 զրշի թղթագրուով վասն Պ. Պ. Եւ Պ. Ս. ի վեցամսեայ եւ Զեր տարեկան հաշւոց. Տնտեսներն 1 թիւէն սկսեալ զրկուած են ժամանակին:

ՊԻԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Սոյն վերնագրոյ տակ՝ անտեսական, առեւտրական, գլուխական, տնտեսական, օրինական եւ այլ պիտանի խնդրոց վերաբերեալ հարցումներ՝ հանդիսիս մէջ հրատարակելու որոշած ըլլալով. յօժարու-

թեամբ պիտի ընդունիմք մեր բաժանորդաց կողմանէ մեզ ուղղուած այս տեսակ հարցումներ ինչպէս եւ այդ հարցմանց համար եկած պատասխաններն։ Հարցմանք թէ պատասխանիք պէտք է համառօտ ըլլան եւ պարզ լեզուաւ գրուած. հրատարակութեան արժանի ըլ համարուած գրութիւնք նաեւ ետք են գարձուիր:

34. Մարած ձայնը բանալու համար ինչ գարման ընելու է:

Երիզա Ն. Յ. ՔէՄԱԼԵԱՆ

55. Կը փափաքիմ գիտնալ թէ միսն ինչ աստիճան զօրութիւն կրնայ տալ մարդուս. եւ բնաւ չուտելն ինչ վնաս կուտայ:

Յ. Ա.

56. Ի՞նչպէս հալեցնելու է ձիւթը, որպէս զի իւր բնական հոտը չի կորսնցնէ:

57. Կերակուրը լաւ մարսելու համար ի՞նչ ընելու է, կամ վրայէն ինչ գործածելու է:

Տ. Կէմլէյիկ

ԱՐԵՒԵԼ. ՏՆՏԵՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Ընդհ. Ժողովոյ շարունակութիւնը ինչպէս ծանուցուած է ներկայ թուոյս մէջ մասնաւոր յօդուածով, տեղի ունեցաւ ամսոյս 10ին, յօրում կատարուեան այլ եւ այլ քուէարկութիւնք եւ ընտրութիւնք ըստ օրակարգի. մանրամասնութիւնքն պիտի հրատարակեմք յառաջիկայ թուով:

ԱԶԴ

ԴՊՐՈՑ

ԱՆԳՆԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Բ. ՇՐՋԱՆ

Առածանի, Առականի, նամականի, Բառակըրանք, Խրատականք, Ոտանաւորք, Մանրապէաք, գիտական հատուածք:

Ս. Մ. ԳԱՍԱՊԵԱՆ

Դիմ բրակագմին 2 դասեկան

» կազմեալին 2 1/2 »

Կեդրոնատեղին է վ. Հիսարեան գրատունը, Ուզուն Զարչը, թիւ 10

ՑՈՒՑԱԿ

Արեւելեան Տնտեսական Միութեան բաժանորդաց կողմանէ 1888 Մարտ 7է
մինչեւ Ապրիլ 9, որ է Միութեան Գ. տարւոյ 1, 2, 3, 4 և 5^{րդ} տեղի ու-
նեցած հինգ շաբաթական վճարմանց ընդհանուր գումարն :

Թիւ	Վ.հար.										
անձի	Դրւ.										
1	60	76	80	180	80	257	20	350	180	470	50
2	70	77	230	181	80	264	20	355	20	471	80
4	100	78	100	183	40	266	100	359	270	474	80
6	300	79	40	184	40	267	20	361	40	476	80
13	120	80	160	191	40	268	110	367	20	478	60
14	80	84	100	192	80	269	20	383	20	479	40
16	400	82	40	197	20	270	40	384	40	484	40
21	50	87	120	199	40	271	120	387	50	485	40
22	110	90	20	200	60	273	40	388	80	487	120
30	20	92	80	201	180	276	60	389	20	490	80
33	200	97	100	202	80	281	130	403	100	491	60
34	60	104	40	203	220	282	130	408	80	495	40
35	70	105	30	206	120	285	200	409	30	498	90
36	70	107	60	207	180	290	40	412	40	500	40
39	40	113	80	215	1000	294	90	415	30	501	200
42	60	118	60	216	1000	292	50	416	40	502	120
43	110	120	40	217	1000	296	80	417	100	503	60
46	20	122	100	218	20	297	20	422	40	504	100
48	60	126	160	220	50	300	40	427	80	505	500
49	40	127	40	221	50	314	60	437	80	506	320
50	40	128	330	222	40	318	20	442	40	508	80
54	50	130	80	224	40	324	40	446	40	509	20
56	50	131	210	241	20	325	80	447	100	510	20
57	40	142	20	242	80	327	20	448	60	512	10
59	60	148	40	246	20	334	20	449	30		17120
61	20	151	40	247	80	335	120	451	60		
64	90	154	110	248	100	338	20	460	20		
65	40	162	20	249	40	342	40	461	20		
69	40	163	30	250	120	344	60	464	40		
71	80	170	40	252	110	347	40	465	40		
72	80	178	20	254	810	349	60	467	40		